



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## ՍԱՐԿԱԲԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՆԱՅԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՄԵԶ

Կիրակի, 30 Յուլիսը, Էսսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ ծխական ընտանիքին համար եղաւ տօնական օր մը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցեց, սարկաւագական ձեռնադրութիւն կատարեց եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը փոխանցեց Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ:

Առաջնորդ Սրբազանը սարկաւագութեան աստիճան շնորհեց մեր եկեղեցիներու դպրաց դասերու 6 անդամներու, որոնք արժանի նկատուած են այս ձեռնադրութեան: Անոնք են՝ Բիւզանդ. Տապաղեան, Պետրոս Ասատուրեան, Վահագն Թօփճեան, Գեորգ Փալանճեան, Րաֆֆի Կարապետեան եւ ԱԼՕ Արզարեան:

Ս. Խորանին սպասարկեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան:

Յայտնենք, որ Առաջնորդ Սրբազան հօր հովանաւորութեամբ եւ ցուցմունքներով, ձեռնադրեալ սարկաւագները անցեալ ամիսներուն հետեւեցան Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքին կազմակերպած յատուկ դասընթացքներուն, հսկողութեամբ բաժանմունքի վարիչներէն՝ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկեանի, եւ արժանի եղան սարկաւագութեան աստիճանին:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մեծ ընտանիքը, շնորհաւորեց ձեռնադրեալ սարկաւագները եւ փոխանցեց իր պատգամը:

Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, իր կարգին, նախ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան հօր եւ յանուն հոգաբարձութեան՝ շնորհաւորեց զանոնք եւ փոխանցեց իր բարեմաղթութիւնները:

Ս. Պատարագի եւ ձեռնադրութեան արարողութենէն ետք, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան հօր, դպրաց դասը թափօրով ուղղուեցաւ եկեղեցւոյ հոգաբարձութեան հիւրասրահը, ուր տեղի ունեցաւ հիւրասիրութիւն. ներկայ հաւատացեալները առիթը ունեցան շնորհաւորելու եւ իրենց բարեմաղթութիւնները փոխանցելու ձեռնադրեալ սարկաւագներուն, հաւատարմութեամբ, նուիրումով ու զոհողութեան բարձր գիտակցութեամբ ծառայելու Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցիին: Այս առթիւ Սրբազան Հայրը իւրաքանչիւր սարկաւագին նուիրեց Նոր Կտակարան մը:

Հիւրասիրութիւնը եւ շնորհաւորանքները վերջ գտան «Կիլիկիա» երգով:

## ORDINATION OF DEACONS AT HOLY MARTYRS CHURCH

On Sunday, July 30, 2006, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, assisted by Rev. Razmig Khatchadourian, conducted Episcopal Holy Mass and ordination of deacons at Holy Martyrs Church in Encino. H.E. Archbishop Yeprem Tabakian was also in attendance on this festive day. The six stole bearers ordained during the Holy Mass were Puzant Dabaghian, Bedros Asadourian, Vahakn Topjian, Kevork Palanjian, Raffi Garabedian, and Avedis Apkarian.

With the singing of a special hymn for the occasion, the ordination of the deacons began during Holy Mass. With the reading of Psalms, the stole bearers rose to the altar on their knees. Following the ordination, the Prelate delivered his message to the faithful and to the newly ordained deacons. First, he gave thanks to God, that under the supervision of Very Rev. Fr. Barthev Gulumian, Co-Director of the Prelacy Christian Education Department, these six servants of our church successfully completed the special course initiated by the Prelacy Christian Education Department and became worthy of ordination. He then congratulated the deacons. Rev. Fr. R. Khatchadourian expressed thanks to the Prelate and congratulated the deacons on behalf of the Board of Trustees.

Following Holy Mass, choir members, led by H.E. Archbishop M. Mardirossian, walked in a procession to the church hall where a reception took place organized by the parish Ladies Guild. During the reception, the faithful were also offered the opportunity to congratulate the deacons and to express their best wishes. On this occasion, the Prelate presented each deacon with a New Testament. The reception came to a close with the singing of "Giligia".